Շ.ՇԱՀԱՄԻՐՅԱՆԸ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՒ ՎՐԱՍՏԱՆԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՀԱՐՑԸ XVIII ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՆ

Ֆ.Ե. ՍԱՅԻԼՅԱՆ

1783թ. Գեորգիևսկի դաշնագրի կնքումից հետո հնդկահայ գաղթօջախի հասարակական գործիչ Շահամիր Շահամիրյանը Հայաստանի ազատագրության նպատակով նամակագրական կանոնավոր կապ էր հաստատել Հերակլ II-ի հետ: Գեորգիևսկի պայմանագիրը կնքելու առիթով նա Հնդկաստանից Հերակլ II-ին է ուղարկում թանկարժեք ընծաներ՝ ոսկե թագ, թագավորական իշխանության այլ խորհրդանիշներ, ինչպես նաև մի շքանշանի նմուշ: Հնդկաստանում իր կողմից ստեղծված այդ շքանշանը՝ ճոխ աղամանդներով զարդարված ոսկե շղթայի վրա, պատկերում էր վրացական ու հայկական ազգային զինանշանները և խորհրդանշում Վրաստանի միավորումը Հայաստանի հետ: Շ.Շահամիրյանը խնդրում էր հաստատել այդ շքանշանի նախագիծը վրացական թագավորության վերակառուցման, ինչպես նաև Հայաստանի հետ միավորվելու առթիվ[1]:

Այս փաստը իր մեկնաբանությունն է ստացել հայ պատմագրության էջերում, ըստ Ա.Ռ. Հովհաննիսյանի, վրացական և հայկական զինանշանների միավորումն արդեն, ինքնըստինքյան, Շահամիրյանի քաղաքական ծրագրի վառ վկայությունն էր[2]: Իսկ Վ.Մ.Մարտիրոսյանի կարծիքով, XVIII դ. 80-ական թվականներին Հերակլ II-ը «ինքն էր միտում հայոց արքայի թագին տիրել», ուստի «հայ ազատագրական շարժման ջերմ համակիրն էր և հայ պետականությունը վերականգնելու կողմնակիցը»[3]:

Հարկ է նշել, որ Շ.Շահամիրյանը, գրելով իր «Որոգայթ փառացը», անպայման հաշվի էր առնում այն հանգամանքը, որ Անդրկովկասում գերիշխանություն հաստատելու համար մղվող պայքարում Հերակլ II-ը լայնորեն օգտվում էր Երևանի և Գանձակի խանությունների բնիկ հայերի՝ իր հանդեպ ունեցած համակրանքից: Հայերը սատար են եղել քրիստոնյա Հերակլ թագավորին և խմբվում էին նրա շուրջ, չնայած վրաց թագավորը Երևանի և Գանձակի խանություններից հարկ էր հավաքում: Գանձակի ընակչությունը, որ ծայր աստիճան հուսահատության էր հասել, հաճախակի էր ընդվզում բոլոր տեսակի հարկահավաքների դեմ:

Շահամիրյանի մեկնակերպի համաձայն, թեև Հերակլ II-ը Հայաստանում թագավորած Բագրատունյաց տոհմի շառավիղներից էր, սակայն ապագա անկախ Հայաստանի Սահմանադրությամբ հայոց խորհրդարանին ենթարկվելու պայմանով նախատեսում էր, որ Հայաստանում թագավորական տոհմի ներկայացուցիչը, այդ թվում նաև Բագրատունյաց արքայատոհմից, կարող է լինել խորհրդարանի ցմահ նախագահ: Իհարկե, մտավախություն կար, որ Հայաստանի և Վրաստանի միավորումից հետո, վրաց թագավորի իշխող դերի հետևանքով, Հայաստանն, այնուամենայնիվ, դրվելու է

---

[1] А.Ерицев, Индийские богатые завещания, Кавказ, 1883, № 94.

[2] А.Р.Иоаннисян, Россия и армянское освободительное движение в 80-х годах 18-ого столетия, Е., 1990, с. 149.

[3] Վ.Մ.Մարտիրոսյան, Հայ-վրացական համագործակցությունը 18-րդ դարի 80-ական թվականների ազատագրական պայքարում, 16–18-րդ դարերի հայ ազատագրական շարժումները և հայ գաղթավայրերը (հոդվածների ժողովածու), Ե., 1989, էջ 227:

անիրավահավասար վիճակի մեջ: Դա նշանակում է, որ հայ-վրացական միավորման հարցը Շ.Շահամիրյանը դիտարկել է ժողովրդավարական միացյալ խորհրդարանի կողմից վրաց թագավորի իշխանությունը սահմանափակելու անհրաժեշտության տեսանկյունից: Սակայն Անդրկովկասում իր գերիշխանությունը հաստատելու նպատակով տոգորված Հերակլը չէր կարող համակերպվել և պատրաստ չէր ընդունելու իր թագավորական իրավունքների սահմանափակումը, մյուս կողմից, հնդկահայ մեծահարուստ Շ.Շահամիրյանի հետ պահպանում էր բարեկամական հարաբերություններ, որպեսզի չդրկվի դրամական խոշոր նվիրատվություններից:

Հերակլ թագավորին ոսկյա թագ և շքանշան ընծայելուց երկու տարի անց Շ.Շահամիրյանը նոր թանկարժեք նվերներ ու խոշոր գումար ուղարկեց վրաց թագավորին և նույնիսկ ցանկություն հայտնեց Հնդկաստանից տեղափոխվել Վրաստան՝ այնտեղ ֆաբրիկագործարանային գործունեություն ծավալելու համար[4]: Ի պատասխան դրա, վրաց թագավորը 1786թ. մարտի 22-ի հրավարտակով ազնվականական կոչում և իշխանական տիտղոս շնորհեց Շահամիրյանին: Այդ հանգամանքը հանգեցրեց նրանց երկխոսության շարունակվելուն: Շ.Շահամիրյանը ջանում էր Հերակլ II-ին ներշնչել Վրաստանում ճորտատիրության վերացման և ժողովրդավարական պետության ստեղծման անհրաժեշտության գաղափարը: 1787թ. հոկտեմբերի 15-ին Շահամիրյանը գրում է Հերակլին. «Հիշիր՝ ոչ թե ժողովուրդն է ստեղծվել քեզ համար, այլ դու ես ընտրված քո ժողովրդի համար. նրա բարօրությունը քո բարօրությունն է, և նրա ազատությունը՝ քո ազատությունը»[5]:

Շահամիրյանի նվիրած շքանշանը, խորհրդանշելով այդ երկու պետությունների միավորումը, ընդգծում էր դրանց ինքնիշխանությունը և բացառում էր Հայաստանի կախվածությունը Վրաստանից: Դա վկայում էր ավելի շուտ իրավահավասար ժողովրդավարական հիմքերի վրա Անդրկովկասի բնիկ հնագույն ժողովուրդների, դրացի և բարեկամ պետությունների միության կամ դաշնության մասին, որոնց ստեղծման պայմանները կարող էին լրացուցիչ մշակվել: Այստեղ հստակորեն արտահայտված է Շահամիրյանի հեռատեսությունը, որի շնորհիվ հայ գործիչը, նախ, ժողովրդավարական սկզբունքներով մշակեց անկախ Հայաստանի Սահմանադրությունն ըստ եվրոպական օրինակների, այնուհետև Հերակլ II-ին առաջարկեց անկախ Հայաստանի Սահմանադրության մեջ շարադրված ժողովրդավարական հիմքերով միավորել Վրաստանն ու Հայաստանը: Պատահական չէ նաև, որ Շահամիրյանը դիմել էր Հերակլին, որ վերջինս հանձնարարի «Որոգայթ փառաց» գիրքը թարգմանել վրացերեն՝ միաժամանակ նշելով, որ այն, գրված լինելով հայերի համար, պիտանի կլինի նաև վրացիներին[6]:

Շահամիրյանը միաժամանակ Էջմիածնի կաթողիկոսի և հայ արքեպիսկոպոս Հովսեփ Արղությանի հետ հաստատել էր աշխույժ նամակագրական կապ՝ քննարկելու ժողովրդավարության հիմքերի վրա Հայաստանի վերակառուցման հարցը: Այս քննարկման ժամանակ հաշվի էր առնվում այն հանգամանքը, որ Էջմիածնի կաթողիկոսությունը՝ համայն հայության հոգևոր կենտրոնը, սեփական արժանապատվության նկատառումներից ելնելով, որևէ բանում չի զիջի վրացական եկեղեցուն, նույնիսկ վրացական թագավորի գերակայության առ-

---

[4] Кавказ, 1883, № 94, с. 3.

[5] Армяно-русские отношения в XVIII веке, 1760 – 1800гг. (Сборник документов, под. ред. акад. М.Г.Нерсисяна, т. IV, Е., 1990 с. 363).

[6] Նույն տեղում, էջ 366 – 367:

կայության դեպքում: Հայտնի է, որ հայկական պետականության բացակայության պայմաններում դարեր ի վեր հայոց եկեղեցին իր ձեռքում էր կենտրոնացրել ոչ միայն հոգևոր, այլ «նաև որոշ առումով պետականության հասկացություն»[7] և հիմա մտադիր չէր այն որևէ մեկին զիջելու:

Վրաց-հայկական միավորման հանդեպ իր պասիվությունը ցուցաբերեց նաև հայ վաճառականությունը, որն իր հարստությամբ և փորձով չէր զիջում վրաց վաճառականությանը:

Վրաստանի և Հայաստանի միավորման՝ Շահամիրյանի նախագծում, անկասկած, հաշվի էր առնվում նաև Անդրկովկասում տիրող լարված իրավիճակը, որը մահմեդական և քրիստոնեական դաշնադրությունների դիմակայության արդյունքն էր: Վրաց պատմաբանները նշում են, որ XVIII դ. 80-ական թվականներին Վրաստանն Անդրկովկասում իր գերիշխանությունը հաստատելու նպատակով հիմնական պայքարը մղում էր Ֆաթալի խան Ղուբացու (Դերբենդացու) դաշնադրության դեմ: Օգտվելով 1779թ. Քերիմ խան Զենդի վախճանից հետո Իրանում ծագած խռովություններից՝ Ֆաթալի խանը ծավալեց եռանդուն գործունեություն՝ ձգտելով իրեն ենթարկել Արևելյան Անդրկովկասը և Հերակլի դեմ հանել մահմեդական տիրակալներին, ի թիվս դրանց նաև Երևանի և Գանձակի խաներին: Իր կողմից Հերակլն էլ էր դաշնակիցներ փնտրում և դտավ այդպիսիներին՝ ի դեմս Ղարաբաղի Իբրահիմ խանի: Վերջիններիս դաշնակցային զորքերը 1779 թ. երկու անգամ պարտության մատնեցին Ֆաթալի խանի զորքերին և հնազանդեցրին Գանձակի խանին: Դրանից հետո Հերակլ II-ը վճռեց տապալել Երևանի խանին և նրան պատկանող տարածքները միացնել Վրաստանին: Սակայն Իմերեթի թագավոր Սոլոմոնի վարած քաղաքականության հետևանքով Քարթլիում առաջացան ներքին քաղաքական բարդություններ, որոնց պատճառով Հերակլ II-ն ստիպված էր վերադառնալ Թիֆլիս[8]:

Հետազոտողների ուշադրությունից վրիպել է այն հանգամանքը, որ Շ.Շահամիրյանի առաջարկությունը Հերակլ II-ին արվել է 1783թ., Գեորգիևսկի դաշնագրի կնքումից հետո: Շ.Շահամիրյանը կարող էր հնարավոր համարել, որ Վրաստանի և Հայաստանի միավորումից հետո Հայաստանի վրա ինքնըստինքյան կտարածվեին Հերակլ II-ի և Ռուսաստանի միջև Գեորգիևսկում կնքված դաշնագրի պայմանները: Իսկ դա կարող էր հանգեցնել այն բանին, որ ռուսական զինվորական ստորաբաժանումները պատասխանատվություն կկրեն ոչ միայն Վրաստանի, այլև Հայաստանի անվտանգության համար: Բացի այդ, միավորված Ռուսաստանը, Վրաստանը և Հայաստանը կարող էին հակահարված տալ մուսուլմանական դաշնադրության նկրտումներին և ապահովել Ռուսաստանի և Վրաստանի հետ միավորված Հայաստանի տարածքային ամբողջությունը:

Անդրկովկասի քրիստոնյա ժողովուրդների միավորման շահամիրյանական ծրագիրը՝ այդ տարածաշրջանում քրիստոնյա բնակչության թվի հետագա աճի հեռանկարով, բացառությամբ նրա առաջ քաշած ժողովրդավարական դաղափարների, գրավեց ցարիզմի, առաջին հերթին՝ Եկատերինա II-ի և գեներալ Զուբովի ուշադրությունը:

Գեներալ Զուբովին Եկատերինա II-ի տված հրահանգում նշվում էր, որ «Օտոմանյան Բարձր դռան սահմանների մոտ ընկած Երևանի մարզը և

---

[7] Վ.Ա.Դիլոյան, Արևելյան Հայաստանը 19-րդ դարի առաջին երեսնամյակին և հայ-ռուսական հարաբերությունները, Ե., 1989, էջ 5:

[8] Н.Бедзенишвили, И.Джавахишвили, С.Джанашиа, История Грузии, Тбилиси, 1950, с. 431.

Արաքս գետի ամբողջ վերին մասը մաքրվի, թերևս, անձամբ Հերակլ թագավորի և նրա զորքերի ուժերով», իսկ գեներալ Ռիմսկի-Կորսակովը էր բրիգադով Գանձակի ռազմարշավում գտնվելու ժամանակ մտերմաբար հաղորդել էր իրեն ուղեկցող Հովսեփ Արղությանին՝ «Երևանը Վրաստանին միացնելու և Ղարաբաղի մելիքներին վրաց թագավորին հոժարակամ հպատակեցնելու» վերաբերյալ կայացած գաղտնի հրամանի մասին[10]: Իսկ այն բանից հետո, երբ 1796թ. դեկտեմբերին Պավել I-ը Կասպիական կորպուսը հետ կանչեց Ռուսաստան և Վ.Զուբովին հեռացրեց այդ կորպուսի հրամանատարությունից, 1802թ. մարտին «Գաղտնի կոմիտեն» քննարկեց Վ.Զուբովի «Ընդհանուր տեսություն ասիական երկրների հետ առևտրի վերաբերյալ» զեկուցագիրը, որում նա առաջարկում էր. «Հաստատել անդրկովկասյան տիրույթների սահմանները, Արաքս, Կուր և Ռիոն գետերով և ավելացնել Վրաստանի քրիստոնեական բնակչության թիվը այն հաշվելով մի քանի միլիոնի»[11], իսկ կես տարի անց, սեպտեմբերի 26-ին գեներալ Ցիցիանովին հրամայված էր՝ «ձեռնամուխ լինել Անդրկովկասի նոր սահմանների հաստատման վերաբերյալ Զուբովի ծրագրի իրականացմանը»[12]: Նշենք, որ ցարիզմի կողմից վերափոխված՝ Վ.Զուբովի հայեցակարգի կենսագործումը ժամանակավորապես դադարեցվեց 1827թ., հայ խոշոր հասարակական գործիչ Խ.Ե.Լազարյանի կողմից՝ երեք նախագծերի առաջադրման պատճառով: Ի դեպ, դրանք հանգեցրին Հայկական մարզի կազմավորմանը: Սակայն, Հայկական մարզը, չունենալով հայկական պետական կառուցվածք, հիմնականում ծառայեց որպես Անդրկովկասը և Հայաստանը համառուսաստանյան շուկայի մեջ ներգրավելու համակարգ:

Այսպիսով, Շահամիր Շահամիրյանը ծանրակշիռ ներդրում ունեցավ հայ ազատագրական շարժման մեջ ապագա անկախ ժողովրդավարական Հայաստանի ստեղծման նախագծի մշակման և ժողովրդավարական հիմունքներով Վրաստանի և Հայաստանի միավորման ծրագրում: Շահամիրյանի այս տեսակետը հետագայում, քրիստոնեական բնակչության աճն ապահովելու նպատակով, ցարիզմը կիրառեց Անդրկովկասում առանց համապատասխան ժողովրդավարական սահմանակարգ ստեղծելու:

Ш.ШАГАМИРЯН И ВОПРОС ОБЪЕДИНЕНИЯ АРМЕНИИ И ГРУЗИИ В ПОСЛЕДНЕЙ ЧЕТВЕРТИ XVIII ВЕКА

Ф.Е. МАИЛЯН

Резюме

Армянский общественный деятель, просветитель Шагамир Шагамирян внес большой вклад в освободительное движение за независимость Армении и создание проекта ее объединения с Грузией на демократической основе.

Эта позиция Шагамиряна в дальнейшем была одобрена царизмом и послужила росту христианского населения в Закавказье, однако соответствующее демократическое законодательство не было принято.

---

[9] Центральный государственный военно-исторический архив, ф. ВУА, д. 2799, л. 7.

[10] Ս.Գ.Ղուկասյան, Հովսեփ Արղությանը ռուսական զորքերի 1796թ. Անդրկովկասյան արշավանքի ժամանակ (Պատմա-բանասիրական հանդես, 1987, № 3, էջ 87 – 88).

[11] Русский архив, 1873, кн. I, с. 885 – 894.

[12] Акты Кавказской археологической комисии, т. 2, № 5, с. 7 – 10.